ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«12» հունվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-128/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 29.12.2016թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 12.12.2016թ. թիվ 1 որոշմամբ հրապարակվել է հրավեր:

Ընկերության կողմից Հրավերով սահմանված կարգով ներկայացվել է մասնակցության հայտ:

21.12.2016թ. Ընթացակարգի հայտերի բացման նիստի ժամանակ հաղթող են ճանաչվել «Սատար» ՀԿ-ն և «Ինտերօրթո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով չորս մասնակից՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, «Սատար» ՀԿ-ն, «Ինտերօրթո» ՍՊԸ-ն և «Նոր որակ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ գնումների համակարգի պաշտոնական կայքէջում Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը բացակայում է, համենայն դեպս հնարավոր չէ գտնել:

Ընկերությունը գտնում է, որ ինչպես Պատվիրատուի, այնպես էլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել մի շարք օրենքսդարական պահանջների խախտումներ:

1. Անդրադառնալով բողոքի հիմքերից մեկին, Ընկերությունը նշել է, որ «Ինտերօրթո» ՍՊԸ-ին Ընթացակարգի շրջանակներում հաղթող ճանաչելու համար հիմք է հանդիսացել գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերով և գերմանական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների առաջարկը, քանի որ Ընթացակարգի Տեխնիկական-բնութագրի մեջ կատարված է հատուկ նշում և առերևույթ է, որ «Ինտերօրթո» ՍՊԸ-ին տրվել է մենաշնորհային դիրք, խախտվել է հավասարության սկզբունքը, որպիսի հանգամանքն արգելվում է օրենքով:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 12-րդ հոդվածը, որի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ

մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են մրցակցության հավասար պայմանները, որը հանգեցրել է գնումների գործընթացի մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման, քանի որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը պարունակում է կոնկրետ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, ծագման երկրի և կոնկրետ աղբյուրի արտադրողի պահանջ և հղում:

Բացի այդ, մրցակից ընկերության կողմից առաջարկած գնային առաջարկից ընդամենը 10 000 - 15 000 ՀՀ դրամ պակաս առաջարկված գինը հիմք է տալիս իրական կասկածի տակ դնել Ընկերության կողմից փոխանցված տվյալների մատչելիության արգելքի խախտումը: Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ համապատասխան (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթեր կազմելով պետք է ապահովվեն գնմանը վերաբերող տեղեկությունների գրառումը և պահպանումը...:

Նույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի կանոններ, մասնավորապես՝ հնարավոր է հստակ պարզել չարտոնված մուտքը:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընկերության մոտ ձևավորված ողջամիտ կասկածը փարատելու համար անհրաժեշտ է պարզել չարտոնված մուտքեր կատարելու փաստը:

2. Ներկայացվող հաջորդ հիմքը այն է, որ «Սատար» ՀԿ-ն հանդիսանում է հասարակական կազմակերպություն, վերջինիս ծավալած գործունեությունը վերաբերում է բացառապես այդ ոլորտին, իր գործունեությունից շահույթ ստանալու իրավունք չունի, ինչը ևս հիմք է տալիս Խորհրդին խնդրելու «Սատար» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մանսակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու և այդպիսի հիմքերի առկայության դեպքում վերջինիս նշված ցուցակում ներառելու համար:

Բացի այդ, վերջինիս մասնակցությունը Ընթացակարգին ստեղծել է անհավասար պայմաններ շահույթ ստանալու նպատակ հետապնդող և չհետապնդող մասնակիցների միջև:

Ընդ որում, «Սատար» ՀԿ-ն չի ապահովում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, այն է՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ելնելով նշված փաստական հանգամանքներից և իրավական հիմնավորումներից՝ Ընկերությունը գտնում է, որ ինչպես ներկայացված հրավերով, այնպես էլ ընթացակարգի արդյունքները գնահատելիս՝ թույլ են տրվել խախտումներ, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2016թ. հայտերի բացման նիստով արձանագրված արդյունքները օրինական չեն կարող դիտվել:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումները, այդ թվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը, չեղյալ համարել 21.12.2016թ. «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-

17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստով արձանագրված արդյունքները՝ վերացնել հնարավոր իրավական հետևանքները:

2. Որոշում կայացնել մասնակցին՝ «Սատար» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-128/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.01.2017թ. ժամը 15:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 11.01.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/54-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար՝ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.12.2016թ.-ին հայտարարվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, գնահատող հանձնաժողովի կողմից գնման հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 21.12.2016թ.-ի ժամը 11:00-ն: Գնման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել 4 մասնակից՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, «Ինտերօրթո» ՍՊԸ-ն, «Նոր որակ» ՍՊԸ-ն և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն:

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

1. «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությունը gnumner.am կայքում դեռ չի հրապարակվել, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատման արդյունքները դեռ չեն ամփոփվել: Բացման նիստը կասեցվել է 2 աշխատանքային օր ժամկետով՝ հավասար գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ գնի

նվազեցման վերաբերյալ բանակցություններ կազմակերպելու նպատակով: Մասնակիցները բանակցությունների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվել են:

2. Հաստատված գնման հայտով ներկայացված և գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում «Օթթո-Բոք» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերին հղման հետ միաժամանակ առկա է եղել «կամ համարժեք» բառակապակցությունը: Միևնույն ժամանակ պատասխանատու ստորաբաժանման պնդմամբ՝ առանց վերոնշյալ հղման հնարավոր չէ լիարժեք սահմանել պահանջվող ծառայության նկարագիրը: Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ հղումը որևէ կերպ չի կարող հանգեցնել մենաշնորհի կամ անհավասար մրցակցային պայմանների առաջացմանը: Նույն «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն թե՛ 2016 և թե՛ 2017 թվականի համար հայտարարված գնման ընթացակարգերին ներկայացրել է գնային առաջարկ վերոնշյալ տեխնիկական բնութագրերով սահմանված ծառայությունների համար և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Armeps համակարգ չարտոնված մուտքի և այլ մասնակիցներին «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած գները հայտնելու վերաբերյալ Պատվիրատուն տեղեկացրել է, որ դա տեխնիկապես հնարավոր չէ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-128/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.01.2017թ. ժամը 15:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-128/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-128/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՍՀՆ-

ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 81-106-րդ չափաբաժինների նկարագրությունը պարունակում է հղում «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմային անվանմանը, որի մոտ նշվել է «կամ համարժեք» բառերը:

3. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա ծանուցվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին (21.12.2016թ.):

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել թվով 4 մասնակից, այդ թվում նաև՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ն:

5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 11.01.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/54-17 գրությամբ հայտնել է, որ «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությունը gnumner.am կայքում չի հրապարակվել, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատման արդյունքները դեռևս չեն ամփոփվել:

4. ԳԲԽ-128/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի 29.12.2016թ. բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 11.01.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/54-17 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը:

1. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Պատվիրատուի կարիքների համար կազմակերպված «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ընթացակարգի 81-106-րդ չափաբաժինների նկարագրության մեջ գերմանական «ՕԹԹՈ-ԲՈՔ» ֆիրմայի կողմից թողարկվող նյութերին հղում կատարելու հետ մեկտեղ նախատեսվել են «կամ համարժեք» բառերը:

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

Այսպիսով, Օրենքի վերոհիշյալ հոդվածը հստակ սահմանում է, որ հրավերի տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեն «կամ համարժեք» բառերը՝ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղում կատարելու պայմաններում, որպիսի պահանջը, Կենտրոնը գտնում է, որ պահպանվել է Պատվիրատուի կողմից հայտարարված հրավերի տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցի մեջ, ուստի Պատվիրատուի կողմից այս մասով թույլ չի տրվել Օրենքի պահանջների խախտում, հետևաբար բողոքը սույն մասով ենթակա է մերժման:

2. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝ տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության

պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ Խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի ***կայացրած առանձին որոշումներ,*** այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Կարգի 47.1-րդ կետի համաձայն՝ մրցակցային, ինչպես նաև նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնման գործընթացների կազմակերպման դեպքում քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել էր 21.12.2016թ. ժամը 11:00-ն: Պատվիրատուն ԳԲԽ-128/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.01.2017թ. ժամը 15:30-ի նիստի ժամանակ հայտնել է, որ 21.12.2016թ. հայտերի բացման նիստի արձանագրություն որպես այդպիսին փաստացի գոյություն չունի, քանի որ Ընթացակարգի արդյունքները դեռևս չեն ամփոփվել և պետք է դեռևս կազմակերպվեն գնի նվազեցման վերաբերյալ բանակցություններ:

Կենտրոնին ուղղված 11.01.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությունը gnumner.am կայքում չի հրապարակվել և մասնակիցներին չի ուղարկվել, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքները դեռ չեն ամփոփվել և նիստը 2 աշխատանքային օրով կասեցվել է մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցություններ իրականացնելու նպատակով:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2016թ. հայտերի բացման նիստի արձանագրությունը, որպես այդպիսին, թե՛ բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ, և թե՛ բողոքի քննության ընթացքում գոյություն չի ունեցել, հաշվի առնելով թե՛ Պատվիրատուի դիրքորոշումը,

թե՛ gnumner.am համացանցային կայքում համապատասխան արձանագրության հրապարակված չլինելու, և թե՛ Ընկերության կողմից արձանագրության գոյության վերաբերյալ համապատասխան ապացույց չներկայացնելու հանգամանքը:

Հետևաբար Խորհուրդն իրավասու չէ դադարեցնելու Պատվիրատուի կամ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի այնպիսի որոշում, որն ըստ էության, դեռևս չի կայացվել և արձանագրվել: Տվյալ պարագայում, ինչպես նշվել է Պատվիրատուի 11.01.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ գրությամբ՝ «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփումը դեռևս չի ավարտվել, հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումը դեռևս չի կայացվել և արձանագրվել, ուստի գտնում ենք, որ բողոքը սույն մասով նույնպես ենթակա է մերժման:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: ***Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա <u>լիազորված մարմինը</u> պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:*** Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմին հանդիսանում է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմինը:

Կարգի 122-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմում է կենտրոնին՝ առաջարկելով ուսումնասիրել ներկայացված նյութերը և հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Ինչ վերաբերում է «Սատար» ՀԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ Ընկերության պահանջին, ապա հայտնում ենք, որ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում սահմանված կարգով նախաձեռնում է ***լիազորված մարմինը,*** ինչը տվյալ դեպքում առկա չէ, հետևաբար սույն մասով բողոքը ևս ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարման խորհրդին 29.12.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է, ուստի Խորհրդին առաջարկում ենք Ընկերության կողմից ներկայացված բողոքը մերժել:

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-128/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան